



Վերանայվել է 2021 հունիսին:

Որտեղ ստանալ Ձեր Medicare-ի հարցերի պատասխանները

Այցելեք Medicare.gov հեռույալի համար.

- Տեսնելու համար, թե ինչ ծառայությունների ծածկույթ է ապահովում Medicare-ը
- Ձեր տարածքում տեղեկություններ ստանալու համար Medicare-ի առողջապահական և դեղերի պլանների մասին ներառյալ ծախսերը և նպաստները
- Ընտրելու համար և ընգրկվելու Medicare-ի առողջապահական և դեղերի պլանում, որը համապատասխանում է ձեր կարիքներին
- Ձեր տարածքում Medicare Լրացուցիչ ապահովագրության (Medigap) վկայագիր գտնելու համար
- Medicare-ում մասնակցող բժիշկներ, առողջապահական ծառայություններ մատուցողներ և մատակարարներ գտնելու համար:
- Medicare-ի բողոք ներկայացնելու տեղեկություններ ստանալու համար կամ ձեր անունից որևէ անձին Medicare-ի հետ խոսելու համար լիազորելու նպատակով
- Համեմատելու տրամադրվող բուժօգնության խնամքի որակը
- Տե՛ս Medicare-ի հրատարակությունները և այլ ռեսուրսներ

Ստեղծեք անվտանգ Medicare հաշիվ հեռույալի համար.

- Ձեր նոր Medicare քարտը տեսնելու և դրա պաշտոնական տպելու համար
- Original Medicare պահանջների և ձեր Մաս «B» (Բժշկական ապահովագրություն) նվազեցվող գումարը հետագծելու համար
- Medicare Ամփոփ Ծանուցումների (eMSNs) համար բաժանորդագրվելու նպատակով
- Ձեր անձնական առողջության վերաբերյալ տեղեկատվությունը կառավարելու համար (օրինակ առողջական վիճակների, ալերգիաների և իմպլանտավորված սարքերի մասին տվյալներ)
- Գրանցվել ձեր «Medicare և Դուք» էլեկտրոնային գրքույկը ստանալու համար (դուք չէք ստանա տպագիր օրինակ, եթե նախընտրեք ստանալ էլեկտրոնային տարբերակը)
- Կառավարել ձեր դեղատոմսով բաց թողնվող դեղերի ցուցակը
- Փնտրել, լրացնել և կառավարել ծառայություններ տրամադրողների ձեր ցանկը և ծանոթանալ նրանց մասին որակյալ տեղեկությունների հետ:

**Չանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227, TTY: 1-877-486-2048)
հեռախոսահամարով հետևյալի համար՝**

- Ստուգելու ձեր Medicare բողոքի կարգավիճակը
- Պատասխաններ ստանալու ձեր Medicare նվազեցումների մասին
- Medicare Ապահովագրավճարների հետ կապված հարցերին պատասխաններ ստանալու
- Հաղորդելու Medicare-ի խարդախության մասին
- Բողոքարկելու Medicare-ի ապահովագրության կամ վճարման մասին որոշումը
- Medicare դեղամիջոցի վարարերյալ Լրացուցիչ օգնության ծածկույթի արժեքի ձեր մակարդակն իմանալու համար, եթե դուք ավտոմատ կերպով պայմանունակ եք եղել և չեք դիմել
- Տեղեկություններ ստանալ Medicare ծածկույթի, նպաստների և կանխարգելիչ ծառայությունների մասին

**Այցելեք ssa.gov կայքը կամ զանգահարեք Սոցիալական ապահովության
ծառայություն 1- 800- 772- 1213 (TTY: 1-800-325-0778) հեռախոսահամարով
հետևյալի համար՝**

- Պարզելու համար, թե արդյոք պայմանունակ եք Medicare-ի համար՝
- Ստեղծելու «my Social Security» («իմ Սոցիալական Ապահովություն») հաշիվը՝ այնպիսի գործառնություններ կատարելու համար, ինչպիսիք են՝ հասցեի, անվան կամ հեռախոսահամարի փոփոխության մասին հաղորդումը
- Medicare Մաս «A»-ի (Հիվանդանոցային ապահովագրություն) և Medicare Մաս «B»-ի (Բժշկական ապահովագրություն) համար գրանցվելու նպատակով
- Մաս «B»-ից դուրս գալու (կամ Մաս «A»-ից դուրս գալու նպատակով, եթե դրա համար ապահովագրավճար եք վճարում)
- Medicare-ի դեղորայքի համար Լրացուցիչ օգնության ծածկույթի ծախսերի համար դիմելու նպատակով
- Մահվան մասին հայտնելու մասին
- Բողոքարկելու համար Եկամտին առնչվող ամենամսյա ճշգրտումների գումարների մասին (IRMAA) որոշումը (որոշ մարդիկ վճարում են ավելի բարձր Մաս «B» և(կամ) Մաս «D» ապահովագրավճարներ, եթե նրանց եկամուտը գերազանցում է որոշակի գումարը)

Դուք իրավունք ունեք ստանալ Medicare-ի մասին տեղեկատվությունը հասանելի ձևաչափով, ինչպես օրինակ՝ մեծ տպագրությամբ, Բրայլի կամ ձայնագրության տեսքով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

